

## Աշխարհագրություն-2017թ.

### Դպրոցական փուլ

/տևողությունը 120րոպե/

### 11-12-րդ դասարաններ

#### Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Բնութագրումով որոշել մեթոդը.

Աշխարհագրական գիտական ճանաչողության այս մեթոդը հնարավորություն է տալիս լուծելու աշխարհագրական օբյեկտների դասակարգման խնդիրը՝ ըստ ընդհանուր և էական հատկանիշների: Ո՞ր մեթոդն է.

1. նկարագրական,
2. համեմատական – աշխարհագրական,
3. քարտեզագրական,
4. դաշտային (արշավախմբային):

2. Աշխարհագրական մշակույթի բաղադրիչներից չէ (չեն).

1. աշխարհագրության լեզուն,
2. աշխարհագրական հետազոտությունների մեթոդները,
3. աշխարհագրական հայտնագործությունները,
4. աշխարհագրական մտածողությունը:

3. Աշխարհագրական օբյեկտը արևելյան երկայնության  $60^\circ$  – ի վրա է: Ո՞ր ժամային գոտում է այն.

1.  $19^\circ$  – րդ,     2.  $20^\circ$  – րդ,     3.  $4^\circ$  – րդ,     4.  $3^\circ$  – րդ:

4. Ո՞ր պնդումն է ճիշտ.

Եթե հակումն արևմտյան է, ապա իսկական ազիմուտը որոշելիս պետք է.

1. մագնիսական ազիմուտին գումարել մագնիսական հակումը,
2. մագնիսական ազիմուտը բաժանել մագնիսական հակման վրա,
3. մագնիսական ազիմուտից հանել մագնիսական հակումը,
4. մագնիսական ազիմուտը բազմապատկել մագնիսական հակումով:

5. Երկրի տրանսպորտային համակարգը ձևավորվում է.

1. տրանսպորտային ձեռնարկություններից,
2. հաղորդակցության ուղիներից,
3. տրանսպորտային միջոցներից,
4. բոլոր վերը թվարկածներից:

6. Ո՞ր դարաշրջանում է տեղի ունեցել հերցինյան ծալքավորությունը.

1. Կայնոզոյան,                                         3. Պալեոզոյան,
2. Պրոտերոզոյան,                                   4. Մեզոզոյան:

7. Զարգացած երկրներում “գիտություն – կրթություն – արտադրություն” համակարգի ձևավորման շնորհիվ սկսեցին առաջանալ.

1. տեխնոպոլիսներ,                                 2. գիտակրթական համալիրներ,
3. տեխնոլոգիական շղթաներ,                4. տեխնաձին լանդշաֆտներ:

8. Բնակչության բնական աճի նվազման վրա չի ազդում.
  1. կանանց զբաղվածության աճը,
  2. կանանց կրթական մակարդակի աճը,
  3. ուրբանիզացման մակարդակի բարձրացումը,
  4. աշխատանքի աշխարհագրական բաժանումը:
9. Ո՞ր շարքում է ճիշտ հաջորդականությամբ ներկայացված սև մետաղաձուլության արտադրական փուլերը.
  1. երկաթաքարի հարստացում – երկաթի հանքաքարի արդյունահանում – թուջի արտադրություն – պողպատի արտադրություն – գլանվածքի արտադրություն,
  2. երկաթի հանքաքարի արդյունահանում – երկաթաքարի հարստացում – գլանվածքի արտադրություն – թուջի արտադրություն – պողպատի արտադրություն,
  3. երկաթի հանքաքարի արդյունահանում – երկաթաքարի հարստացում – թուջի արտադրություն – պողպատի արտադրություն – գլանվածքի արտադրություն,
  4. երկաթի հանքաքարի արդյունահանում – երկաթաքարի հարստացում – պողպատի արտադրություն – թուջի արտադրություն – գլանվածքի արտադրություն:
10. ՀՀ պոլիմերների քիմիայի ենթաճյուղի արտադրատեսակներն են.
  1. ազոտային նյութերը,
  2. ծծմբական թթուն և պղնձարջասպը,
  3. քիմիական ռեակտիվները և վիտամինները,
  4. պլաստմասսան և քիմիական մանրաթելերը:
11. Կենդանական ռեսուրսների պահպանությանն ուղղված միջոցառում չէ.
  1. արոտաշրջանառության կազմակերպումը,
  2. կլիմայավարժեցումը և վերաբնակեցումը,
  3. հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը,
  4. կենսատեխնիկական միջոցառումների կազմակերպումը:
12. Հյուսիսային կիսագնդի ո՞ր շարքի բնական զոնաներն են դասավորված հյուսիսից հարավ ճիշտ հերթականությամբ.
  1. սավաննաներ, անապատներ և կիսանապատներ, անտառատափաստաններ և տափաստաններ,
  2. տունդրա, բարեխառն գոտու անտառներ, անտառատափաստաններ և տափաստաններ,
  3. բարեխառն գոտու անտառներ, անապատներ և կիսանապատներ, անտառատափաստաններ և տափաստաններ,
  4. տունդրա, անտառատափաստաններ և տափաստաններ, բարեխառն գոտու անտառներ, կիսանապատներ և անապատներ:

13. Անկլավ է.

1. Այասկան,
2. Սվազիլենդը,
3. Կալինինգրադի մարզը,
4. Նախիջևանը:

14. Ջրապատող է.

1. ջրային տրանսպորտը,
2. գյուղատնտեսությունը,
3. ջրաէներգետիկան,
4. ձկնային տնտեսությունը:

15. ԼՂՀ-ի մասին ո՞ր պնդումն է ճիշտ.

1. տրանսպորտի հիմնական տեսակը երկաթուղայինն է,
2. Շուշիում է Գանձասարի վանքային համալիրը,
3. Մարտունին և Ստեփանակերտը երկաթուղային կայարաններ են,
4. Գորիս – Բերձոր – Ստեփանակերտ ավտոխճուղին անցնում է Լիսազորի լեռնանցքով:

#### **Կարճ պատասխանով առաջադրանքներ**

16. Երկրի բնակչության թիվը 40 մլն. է, գյուղական բնակչության թիվը՝ 8 մլն.: Որոշել ուրբանիզացիայի մակարդակը:
17. Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը  $-12^{\circ}$  է, իսկ նույն պահին ստորոտում՝  $+6^{\circ}$ : Օդի ճնշումը գագաթին 280 մմ է: Որքա՞ն կլինի օդի ճնշումը լեռան ստորոտին (հաշվարկը կատարել  $6^{\circ}$  - ուլ):
18. Գետի ակունքի բացարձակ բարձրությունը 3500 մ է, իսկ գետաբերանինը՝ 1000 մ: Գետի երկարությունը 250 կմ է: Որոշել նրա թեքությունը:
19. Երկրում բրնձի համախառն բերքը կազմում է 420 000 ցենտներ, իսկ ցանքատարածությունների մակերեսը՝ 12 000 հեկտար: Որքան կլինի միջին բերքատվությունը:
20. Ռուսական "Միոնի" գիտակայանը հարավային բևեռից հեռու է 2664 կմ: Հարավային ո՞ր լայնությունում է գտնվում գիտակայանը: